ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1801 - Ա **31 մարտի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 95 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՂԻԱ ԺՈՐԱՅԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ, ՆԱԻՐԱ ԺՈՐԱՅԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ, ԼԱԼԱ ՇԱՎԱՐՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Եղիա Ժորայի Թովմասյանի (ծնված 20.09.1966թ.), Նաիրա Ժորայի Թովմասյանի (ծնված 17.05.1968թ.), Լալա Շավարշի Հովհաննիսյանի (ծնված 18.09.1947թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.95 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 583.1քմ, որից 472քմ մակերեսով հողամասն Եղիա Ժորայի Թովմասյանին, Նաիրա Ժորայի Թովմասյանին, Լալա Շավարշի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 111.1քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 25.10.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 10.11.2008թ. հ.10053, Երևանի քաղաքապետարանի ‹‹Հողի և ունեցվածքի գործառնություններ›› ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/150 գրությունները, Երևանի քաղաքապետարանի ‹‹Քաղաքաշինություն›› ՊՓԲԸ-ի 16.03.2009թ. հ. 20-Ել-1782 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.95 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ‹‹Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի ‹‹Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին›› հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.95 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Եղիա Ժորայի Թովմասյանի, Նաիրա Ժորայի Թովմասյանի, Լալա Շավարշի Հովհաննիսյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 472քմ մակերեսով հողամասին կից 111.1քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 111.1քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.95 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.95 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Եղիա Ժորայի Թովմասյանի, Նաիրա Ժորայի Թովմասյանի, Լալա Շավարշի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ